նեստորականների կաթուղիկոսութեան խնդրի առթիւ։ Բ. Այդ ժողովում պատահմամբ ներկայ է լինում նաև Մամիկոնէից Կոմիտաս եպիսկոպոսը, որը նոյն ժողովին՝ իբրև Հայոց կաթուղիկոս, դատանութեան թուղթ է ներկայացնում. ուրեմն Կոմիտասի կաթուղիկոսութեան առաջին տարին է 613 թուականը։ Գ. Ներսէս Գ. Շինողի առ Կոստանդ Բ. կայսր գրած թղթի մէջ այդ ժողովի յիշատակութեան առթիւ սխալմամբ է յիշուած Զաքարիա պատրիարքը իբրև ներկայ և ժողովը եղել է Երուսաղէմի գերութիւնից ոչ թէ յետոյ, այլ առաջ։

Երուանդ վարդապետ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

Էդիսոնը տիրել է շանթին. Այս է հաղորդում «Ռուսի» 78 համարը։ Ականատեսը պատմում է, թէ ինչպէս մի վայրկենի մէջ կտոր կտոր փշրեց ահագին ժայռը...։ Իսկ ամենապլսաւորն այն է, որ այդ շանթը անդրադարձ ազդեցութիւն չունի։ Փորձ կատարողները այնքան մօտ են եղել ժայռին, որ եթէ այն լինէր նիտրակլիցերին կամ որոտացող մղեկ, նրանց մաս մաս կանէր։ Բայց նորա դդացել են մի թեթև ցնցում միայն փշրուող ժայռից յառաջացած։ Եւ այս լուրը յայտնողը պնդում է թէ նոյն և նման էր շանթի հարուածի. որովհետև ուրիշ նիւթերից յառաջացած հարուածը առարկայի հետ ոչնչացնում է և նրա շուրջը գտնուած միւս իրերը, սակայն այստեղ վնաս կրողը միայն այն առարկան է, որին ուղղուած է հարուածը։ Լրատուն համարում է այն մի «հրեշային ելեքտրական ոյժ» և բաւական է համարում 10 այնպիսի հարուածներ, որ ոչնչացնէ մի բերդ և 100-ը, որ մոխիր դարձնէ Պարիզ կամ Բեռլին քաղաքները։

Էդիսոնը իւր գաղտնիքը ոչ ոքի չի ուզում յայտնել, թէև լրտեսներ և հետաքրքրուողներ բազմաթիւ են. որովհետև եթէ մի այսպիսի զօրութիւն անցնի կառավարութեան ձեռքը՝ յաւիտեան կտրկացնէ մարդկութիւնը. իսկ փորձը շատերի առաջ առանց քաշուելու կրկնում է։

Օդաչու գործիքներ.—Օդաչու գործիքների ցարդ երեք տեսակն է յայտնի.

1 Օդապարիկ—սա ներկայացնում է մի ահագին գունդ կուտապերշից պատրաստած և օդից թեթև գազով (օր. ջրածնով) լեցրած: Օդապարիկներ շարժողը օդի վերին շերթի հոսանքներն են: Պարզ է, որ այս հանգամանքում մարդ պիտի ուսումնասիրէ մթնալորտի վերին հոսանքները, որ հնարաւորէ դառնում կամ թռուցիկների և կամ մանր օդապարիկների միջոցով, որոնց վերայ լինում են չափելագործիքներ:

2 Կառավարուող օդապարիկ: Այս երկրորդ կարգի օդապարիկները այն առաւելութիւնն ունին, որ կարելի է ուղղել դէպի ցանկացած կողմը: Այս նպատակի համար յարմարեցրած է մի բենզինի կամ ցքու շարժիչ մեքենայ, բայց հէնց այս մեքենան բարձրացնելու համար երկրորդ կարգի օդապարիկը աւելի մեծ ծաւալ պիտի ունենայ:

3 Թռչելու մեքենայ—որով մարդիկ թռչունների նման կտրում են օդի սահմանները՝ շարժելով իրենց արհեստական թեւերը: Թռչելու մեքենան բաղկացած է մի քանի մակարդակներից, որ շարժուում են յատուկ պատրաստած մեքենայի միջոցով:

Թռչելու մեքենան լուր կազմութեամբ մօտենում է թռչունի թեւերի և պոչի կազմութեան, և նոյն իսկ թռչելու յաջողութիւնը կախուած է այն հմտութիւնից, որ մարդ ձեռք է բերում դիտելով թռչունների թռիչքը: Երրորդ տեսակի գործիքի արագութիւնը աւելի է քան առաջիններինը, սակայն յաջողութիւնը կախուած է այն ունակութիւնից, որ ձեռք է բերում մարդ բազմաթիւ փորձերից յետոյ: Այստեղ ի հարկէ կատարելութեան հեռանկարը շատ ազատ է, որովհետև մարդը ներկայանում է միայն մեքենայավար: Ենդիրը այլ կերպարանք կստանար, եթէ հնար լինէր արհեստական թեւերն ու պոչը շարժել մկանային ուժով:

Թէ ինչ գործնական հետևանքների պիտի յանգին այս ճիգերը, դժուար է դուշակել. բայց պատերազմների համար արդէն սկսել են օգտուել զանազան նպատակով: Իսկ եթէ որա վերայ էլ աւելացնենք Էդիսոնի ասածը—այն ժամանակ մարդիկ շանթալից ու որոտալով պիտի սլանան օդի վերին սահմաններում և այնտեղից իբր նոր Աբրամազդ կրակ ու շանթ պիտի տեղան ներքևում ապրողների գլխին, պատերազմը կվերածուի երկրի վերայից ամպերի մէջ կամ էլ բարձր: